«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ

2022թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2023

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. 6

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 7

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 8

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 9

2022Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ -ի առ 31 դեկտեմբերի 2022թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացումը ստանձնել ենք այդ ամսաթվից շուրջ չորս ամիս հետո, ուստի հնարավորություն չենք ունեցել հետևելու կենսաբանական ակտիվների և պաշարների գույքագրման գործընթացին տարվա սկզբում և վերջում: Այդ ակտիվների բնույթով և հաշվառման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք կենսաբանական ակտիվների և պաշարների առկայության և քանակության վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Քանի որ կենսաբանական ակտիվների և պաշարների մնացորդների մեջ հնարավոր անճշտությունը կարող է ազդել տարվա շահույթի ցուցանիշի վրա, բացի այդ ցուցանիշից, մենք չենք կարող գնահատել թե ինչպիսի ճշգրտման կարիք կարող է լինել նաև տարվա շահույթի գծով:

Բացի այդ, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված առևտրական դեբիտորական պարտքերի նկատմամբ կիրառված աուդիտորական ընթացակարգերի արդյունքում ընտրանքային ստուգման են ենթարկվել դրանց գումարային մեծության 1/3-ը, սակայն արտաքին հաստատմամբ կամ այլընտրանքային աուդիտորական ընթացակարգերով հավաստիացում կարողացել ենք ձեռք բերել միայն ստուգված դեբիտորական պարտքերի շուրջ 2/3-ի վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի

Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Ընկերությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արթուր Հարությունյան

Տնօրեն, Որակավորված աուդիտոր, ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

28 սեպտեմբերի 2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	3,233,146	2,237,840
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	6	18,275	388,944
Հետաձգված հարկային ակտիվներ	7	17,714	13,866
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	8	262,184	333,332
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**3,531,319**	**2,973,982**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	223,989	214,663
Կենսաբանական ակտիվներ	10	22,897	127,564
Տրված ընթացիկ կանխավճարներ		25,552	9,836
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	11	1,139,970	262,072
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	143,987	49,613
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,556,395**	**663,748**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**5,087,714**	**3,637,730**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	13	83,406	83,406
Էմիսիոն եկամուտ		23,904	23,904
Կուտակված շահույթ		(551,934)	(731,226)
Ընդամենը սեփական կապիտալ		**(444,624)**	**(623,916)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	14	51,436	1,650,173
Լիզինգի գծով պարտավորություններ	16	361,160	61,728
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**412,596**	**1,711,901**
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	15	4,896,362	2,364,512
Լիզինգի գծով պարտավորություններ	16	97,946	40,407
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	17	74,622	83,941
Շահութահարկի գծով պարտավորություն		9,582	23,389
Ընթացիկ պահուստներ		41,232	37,496
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**5,119,744**	**2,549,745**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**5,087,716**	**3,637,730**

Տնօրեն
Վահագն Գևորգյան

28 սեպտեմբերի 2023թ.

Գլխավոր հաշվապահ
Վահան Հախվերդյան

ՍՊԸ «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» LLC «SPITAK POULTRY PLANT» 06950351

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծան.	**2022թ.**	**2021թ.**
Արտադրանքի վաճառքից հասույթ	18	3,323,370	3,279,415
Վաճառքի ինքնարժեք		(2,882,794)	(2,745,403)
Համախառն շահույթ		**440,576**	**534,012**
Այլ եկամուտներ	19	84,430	83,062
Իրացման ծախսեր	20	(265,358)	(217,992)
Վարչական և այլ ընդհանուր ծախսեր	21	(135,119)	(140,005)
Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսեր»-ով վերաչափումից օգուտ	10	-	13,745
Ֆինանսական ծախսեր	22	(166,284)	(129,462)
Այլ ծախսեր		(14,208)	(9,420)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ)		270,381	141,382
Շահույթ (վնաս) նախքան հարկումը		**214,418**	**275,322**
Շահութահարկի գծով ծախս	24	(35,125)	(41,812)
Տարվա շահույթ		**179,293**	**233,510**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**179,293**	**233,510**

Տնօրեն

Վահագն Գևորգյան

Գլխավոր հաշվապահ

Վահան Հախվերդյան

28 սեպտեմբերի 2023թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2021թ.	83,406	23,904	(964,736)	**(857,426)**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	-	233,510	**233,510**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**83,406**	**23,904**	**(731,226)**	**(623,916)**

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	**83,406**	**23,904**	**(731,226)**	**(623,916)**
Հաշվետու տարվա զուտ շահույթ	-	-	179,293	**179,293**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**83,406**	**23,904**	**(551,933)**	**(444,623)**

Տնօրեն

Վահագն Գևորգյան

Գլխավոր հաշվապահ

Վահան Հախվերդյան

28 սեպտեմբերի 2023թ.

«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» «SPITAK POULTRY PLANT» 06950351

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	3,166,634	4,614,415
Այլ եկամուտ	31,984	62,094
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(2,799,025)	(2,654,987)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(478,571)	(356,267)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(214,726)	(158,675)
Վճարված շահութահարկ	(59,719)	(25,228)
Այլ վճարումներ	(225,185)	(307,064)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(578,608)**	**1,174,288**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից և կառուցումից ելքեր	(286,066)	(361,086)
Տրամադրված փոխառություններ	(93,800)	-
Տրամադրված փոխառությունների մարում	93,801	800
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(286,065)**	**(360,286)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Վարկերի ստացում	-	-
Վարկերի մարում	(268,885)	(174,100)
Փոխառությունների ստացում	3,651,389	3,182,169
Փոխառությունների մարում	(2,273,212)	(3,629,376)
Տոկոսների վճարում	(18,574)	(13,093)
Լիզինգի գծով պարտավորության մարումից ելքեր	(84,118)	(140,995)
Լիզինգի գծով տոկոսների վճարումից ելքեր	(46,719)	(6,430)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**959,881**	**(781,825)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**95,208**	**32,177**
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**49,613**	**17,507**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(834)	(71)
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**143,987**	**49,613**

Տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Վահագն Գևորգյան — Վահան Հախվերդյան

28 սեպտեմբերի 2023թ.

«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» «SPITAK POULTRY PLANT» 06950351

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2022Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 27.05.2015թ.-ին և հանդիսանում է «Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ -ի իրավահաջորդը:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

ա) Ընկերության

Անվանումը՝	«Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ
Գրանցման համարը՝	222.110.858977
Գրանցման վկայականը՝	03Ա1008977
Գրանցման ամսաթիվը՝	27.05.2015թ.
Իրավաբանական հասցեն՝	ՀՀ, ք. Սպիտակ, Շիրակի խղճ. 144
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Սպիտակ, Շիրակի խղճ. 144
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	06950351

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը թռչնամսի արտադրությունն ու վաճառքն է:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31.12.2022թ. դրությամբ կազմել է 181 հոգի (31.12.2021թ.՝ 169 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 83,406 (ութսուն երեք հազար չորս հարյուր վեց) հազար ՀՀ դրամ: Ընկերության մասնակիցներն են Ստանիսլավ Հովակիմյանը՝ 83,301 (ութսուն երեք հազար երեք հարյուր մեկ) հազար ՀՀ դրամ և Արկադի Համբարձումյանը՝ 105 (մեկ հարյուր հինգ) հազար ՀՀ դրամ բաժնեմասնակցությամբ:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է: Ընկերության ընթացիկ գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը, իրականացնում է Ընկերության Տնօրենը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. <u>Հայտարարություն համապատասխանության մասին</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին («ՓՄԿ ՖՀՄՍ») համապատասխան: ՓՄԿ ՖՀՄՍ-ն ընդունվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից 2015թ., իսկ դրա պաշտոնական հայերեն տարբերակը հրապարակվել է ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 25-ի N 559-Ն որոշմամբ:

<u>Չափման հիմունքը</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.2. <u>Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը</u>

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.3. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023 թվականի սեպտեմբերի 28-ին Ընկերության տնօրեն Վահագն Գևորգյանի և գլխավոր հաշվապահ Վահան Հախվերդյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվն իրենից ներկայացնում է կենդանի բույս կամ կենդանի: Կենդանիները և բույսերն ընդունակ են կենսաբանական փոխակերպման: Ինկուբատորի համար նախատեսված ձվերը ևս համարվում են կենսաբանական ակտիվներ: Գյուղատնտեսական գործունեությունը կենսաբանական ակտիվների փոխակերպման կառավարումն է:

Կենսաբանական փոխակերպումը հանգեցնում է ակտիվների փոփոխման՝ աճի (կենդանու կամ բույսի քանակի աճի կամ որակի բարելավման), դեգեներացիայի (կենդանու կամ բույսի քանակի նվազման կամ որակի վատթարացման), բազմացման (լրացուցիչ կենդանիների կամ բույսերի ստեղծման) կամ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության:

Ընկերության կենսաբանական ակտիվները ներառում են «Բրոյլեր» ցեղատեսակի հավի ճտերը: Ճտերը հաշվետու ամսաթվի դրությամբ չափվում են «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով:

Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով սկզբնական ճանաչման պահին չափումից, ինչպես նաև հետագա վերաչափումից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:

Ճտերի աճեցման հետ կապված ծախսումները՝ աշխատանքային, նյութական, կոմունալ և այլ վերադիր ծախսումներ, ծախսագրվում են դրանց տեղի ունենալուն զուգընթաց:

Կենսաբանական ակտիվների հաշվառման հետ կապված այլ մանրամասները նկարագրված են ծանոթագրություն 10-ում:

3.2. Պաշարներ

Ընկերության պաշարները ներառում են կերը և կերային հավելումները՝ որպես հումք և նյութեր, թռչնամիսը՝ որպես պատրաստի արտադրանք: Կենդանի ճտերը մորթվելու պահին փոխանցվում են պաշարների կազմ որպես թռչնամիս, որի ինքնարժեքում ներառվում են նաև մորթման հետ կապված ուղղակի և վերադիր արտադրական ծախսումները:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.3. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) գնորդին է փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,

բ) Ընկերությունը չի պահպանում՝

- կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,
- վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն,

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը հնարավոր է արժանահավատորեն չափել:

3.4. <u>Հիմնական միջոցներ</u>

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ կորուստը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում են հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման-վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Շենքեր, շինություններ (կառուցվածքներ) 20-40 տարի
- Տրանսպորտային միջոցներ 5-16 տարի
- Տնտեսական գույք և կահույք 3-8 տարի
- Համակարգչային տեխնիկա և սերվերներ 1-5 տարի
- Մեքենաներ և սարքավորումներ 1-20 տարի

3.5. <u>Շահութահարկ</u>

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների

համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլի սկզբնական ճանաչումից,

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը: Նման ճշգրտումները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կա՛մ

բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, երբ ա) ունի իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, մինչև երեք ամիս սկզբնական մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.7. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Ընկերությունը վարձակալում է մի շարք ակտիվներ, մասնավորապես՝ գրասենյակային տարածք և տրանսպորտային միջոցներ:

Վարձակալված ակտիվները (բացառությամբ ֆինանսական վարձակալության դեպքերի) չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքում, երբ խրախուսող պայմաններ են ստացվում գործառնական վարձակալության պայմանագիր կնքելու համար, այդ խրախուսող վճարները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսող պայմաններից ամբողջ օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը:

Ֆինանսական վարձակալության դեպքում, Ընկերությունը որպես վարձակալ, վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական վարձակալության շրջանակներում իր օգտագործման իրավունքները և պարտականությունները ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանք որոշվում են վարձակալության սկզբի դրությամբ: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում (լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը) ավելացվում է որպես ակտիվ ճանաչված գումարին: Նվազագույն վարձավճարների ներկա արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, իսկ եթե այն հնարավոր չէ որոշել, ապա՝ վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով:

Ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվի համար մաշվածությունը հաշվարկում է՝ համաձայն այդ տեսակի ակտիվի համար Ընկերության կողմից կիրառվող քաղաքականության: Եթե խելամտորեն որոշակի չէ, որ վարձակալը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին պետք է ամորտիզացվի վարձակալության ժամկետից կամ օգտակար ծառայության ժամկետից առավել կարճի ընթացքում:

3.8. Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		**Հաշվետու ամսաթվի փոխարժեք**	
Դրամով	**2022թ.**	**2021թ.**	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
1 ԱՄՆ Դոլար	434.86	503.81	393.57	480.14
1 ԵՎՐՈ	459.48	596.65	420.06	542.61
1 Ռուսական Ռուբլի	6.48	6.84	5.59	6.42

3.9. Ֆինանսական գործիքներ

(i) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սովորաբար ճանաչվում են կատարված աշխատանքների դիմաց նախահաշիվների և ընդունման-հանձնման ակտերի հիման վրա դուրս գրված հաշիվ ապրանքագրերի անվանական գումարներով: Յուրաքանչյուր տարեվերջին Ընկերությունը ստուգում է դեբիտորական պարտքերի հավաքման հավանականությունը և անհրաժեշտության դեպքում ստեղծում է հնարավոր կորուստների պահուստ՝ շահույթում կամ վնասում ճանաչելով արժեզրկումից կորուստը:

(ii) Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Ընկերության կրեդիտորական պարտքերը մարման սովորական ժամկետով, անտոկոս ֆինանսական պարտավորություններ են, որոնք ճանաչվում են անվանական գումարներով:

(iii) Տրամադրած և ստացված փոխառություններ

Տրամադրած և ստացված փոխառությունները սկզբնապես հաշվառվում են գործարքի գումարով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքի մեթոդով՝ արդյունքային տոկոսադրույքով: Կարճաժամկետ անտոկոս կամ շուկայականից էականորեն ցածր տոկոսադրույքով փոխառությունները հաշվառվում են գործարքի գումարով և անվանական տոկոսադրույքով: Երկարաժամկետ փոխառությունները հաշվառվում են վճարվելիք կամ ստացվելիք գումարների (ներառյալ տոկոսների վճարումների ու մայր գումարի վերադարձի) ներկա արժեքով: Այդ ներկա արժեքի և գործարքի գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ գործարքի կողմը սեփականատեր է, որի դեպքում այդ տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես սեփականատերերից կապիտալի հատկացում կամ սեփականատերերին շահույթի բաշխում: Մինչև մեկ տարի ժամկետով գործարքները սեփականատերերի հետ հաշվառվում են անվանական գումարներով:

3.10. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր տարեվերջին Ընկերությունը ստուգում է, թե արդյոք առկա է որևէ վկայություն, որ հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները կարող են արժեզրկված լինել: Եթե կա նման վկայություն, ապա իրականացվում է համապատասխան ակտիվ(ներ)ի արժեզրկվածության հաշվարկ: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը՝ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի

փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.11. <u>Պահուստներ</u>

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է, առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12.<u>Աշխատակիցների հատուցումներ</u>

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. Աշխատավարձը,
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսինն են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
c. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի

վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքների պարագայում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. <u>Հիմնական միջոցների օգտակար ծառայություն</u>

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. <u>Ակտիվների արժեզրկումը</u>

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

5. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ (կառուցվածքներ)	Հողամասեր	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք և կահույք	Համակարգչային տեխնիկա և սերվերներ	Մեքենաներ և սարքավորումներ	Ընդամենը
Արժեք							
Մնացորդ առ 01.01.2021թ.	1,346,880	81,800	537,953	46,460	4,257	1,154,172	3,171,523
Ավելացում	1,640	1,797	15,725	1,989	1,937	58,963	82,052
Նվազում	-	(400)	-	-	-	-	(400)
Մնացորդ առ 31.12.2021թ.	**1,348,520**	**83,197**	**553,678**	**48,449**	**6,195**	**1,213,135**	**3,253,175**
Մնացորդ առ 01.01.2022թ.	1,348,520	83,197	553,678	48,449	6,195	1,213,135	3,253,174
Ձեռքբերում/ կապիտալացում	5,495	10,511	54,556	3,117	581	569,318	643,578
Շահագործման հանձնում	535,244	-	-	-	-	-	535,244
Նվազում	-	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2022թ.	**1,889,259**	**93,708**	**608,234**	**51,566**	**6,776**	**1,782,453**	**4,431,996**
Մաշվածություն							
Մնացորդ առ 01.01.2021թ	153,821	-	80,434	28,601	4,156	593,382	860,394
Տարվա մաշվածություն	38,341	-	42,599	3,459	1,050	69,494	154,943
Նվազում	-	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2021թ.	**192,162**	**-**	**123,033**	**32,058**	**5,206**	**662,876**	**1,015,336**
Մնացորդ առ 01.01.2022թ	192,162	-	123,033	32,058	5,206	662,876	1,015,336
Տարվա մաշվածություն	38,464	-	38,650	2,929	1,234	102,237	183,514
Նվազում	-	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2022թ.	**230,626**	**-**	**161,683**	**34,987**	**6,440**	**765,113**	**1,198,850**
Հաշվեկշռային արժեք							
Առ 31.12.2021թ.	**1,156,358**	**83,197**	**430,645**	**16,391**	**988**	**550,259**	**2,237,840**
Առ 31.12.2022թ.	**1,658,633**	**93,708**	**446,551**	**16,579**	**336**	**1,017,340**	**3,233,146**

Հաշվետու տարվա վերջի դրությամբ առկա մեքենա-սարքավորումներից 706,150 հազար ՀՀ դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները ձեռք են բերվել լիզինգով, որոնց սեփականության իրավունքն ընկերությանը դեռևս չի փոխանցվել: Լիզինգի ներքո պահվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է՝ 655,487 հազար ՀՀ դրամ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականությամբ պատկանող որոշ մեքենա-սարքավորումները՝ 389,043 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով գրավադրված են որպես սեփականատիրոջ կողմից հսկվող այլ կազմակերպությունների բանկային վարկերի ապահովություն:

Տարվա ընթացքում շահագործման հանձնված 535,244 հազար ՀՀ դրամ սկզբնական արժեքով ինկուբատորի համար նախատեսված մասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական դեռևս ստացված չէ (տես նաև ծանոթ. 6):

6. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ

Նախորդ տարեվերջի դրությամբ այս հոդվածում ներառված էր Ընկերության կողմից կառուցվող ինկուբատորի համար նախատեսված մասնաշենքի վրա կատարված ծախսումների գումարը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ այդտեղ ներառված են մայրական հավերի համար նախատեսված մասնաշենքի կառուցման ծախսումները: Իսկ ինկուբատորի մասնաշենքի կառուցումը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ավարտվել է, և կա ստորագրված ու հաստատված ավարտական ակտ, իսկ ինկուբատորի արտադրամասը սկսել է շահագործվել: Սակայն, սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ մասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը դեռևս ստացված չէ (փաստացի կատարվածի և նախագծային փաստաթղթերի միջև որոշ ոչ էական անհամապատասխանությունների պատճառով): Ընկերության մասնագետները համապատասխան պետական մարմինների հետ սերտ գործակցում են նշված խնդիրներին հնարավորինս շուտ լուծում տալու համար:

7. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

7.1. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածների հետ.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
Հազար դրամ	**31.12.22թ.**	**31.12.21թ.**	**31.12.22թ.**	**31.12.21թ.**	**31.12.22թ.**	**31.12.21թ.**
Հիմնական միջոցներ	9,274	9,605	-	-	9,274	9,605
Կենսաբանական ակտիվներ	-	-	-	(2,474)	-	(2,474)
Արձակուրդայինի պահուստ	7,396	6,735	-	-	7,396	6,735
Դեբիտորական պարտքեր	1,043	-	-	-	1,043	-
Զուտ հարկային ակտիվ (պարտավորություն)	**17,714**	**16,340**	**-**	**(2,474)**	**17,714**	**13,866**

7.2. Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

	2021թ.			2022թ.		
Հազար դրամ	**1 հունվ.**	**ճանաչված շահույթում կամ վնասում**	**31 դեկտ.**	**1 հունվ.**	**ճանաչված շահույթում կամ վնասում**	**31 դեկտ.**
Հիմնական միջոցներ	10,206	(601)	9,605	9,605	(330)	9,275
Կենսաբանական ակտիվներ	(2,104)	(370)	(2,474)	(2,474)	2,474	-
Արձակուրդայինի պահուստ	5,703	1,032	6,735	6,735	661	7,396
Դեբիտորական պարտքեր	-	-	-	-	1,043	1,043
Ընդամենը	**13,805**	**61**	**13,866**	**13,866**	**3,848**	**17,714**

8. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	241,806	310,604
Շինանյութեր	19,301	21,329
Ոչ նյութական ակտիվներ	1,077	1,399
Ընդամենը	262,184	333,332

9. Պաշարներ

Հազար դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Կեր և կերային հավելումներ	152,150	143,206
Պատրաստի արտադրանք	44,542	42,050
Տարաներ և փաթեթավորման պարագաներ	5,026	7,176
Արագամաշ առարկաներ	18,018	19,692
Այլ	4,253	2,539
Ընդամենը	**223,989**	**214,663**

Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել 1,753,138 հազար դրամ (2021թ.՝ 1,837,381 հազար դրամ): Պաշարների սեփականության իրավունքի սահմանափակում չկա:

10. Կենսաբանական ակտիվներ

Ընկերության կենսաբանական ակտիվները մորթելու և վաճառքի նպատակով աճեցվող հավի ճտերն են՝ «Բրոյլեր» ցեղատեսակի: Ճտերը գնվում են 1-օրական և պահվում են մինչև 38-42 օր, որից հետո մորթվում և վաճառվում են: Երբեմն վաճառվում են նաև մոտ 30 օրական ճտեր: Ճտերը տարվա ընթացքում հաշվառվում են ձեռքբերման և աճեցման փաստացի ինքնարժեքով՝ ներառյալ արտադրական վերադիր ծախսումներ, իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերաչափվում են «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներով»: Նախորդ տարվա վերջին Ընկերությունն առաջին անգամ ձեռք էր բերել ինկուբատորի համար նախատեսված ձվեր՝ 79,200 հատ (որոնք նույնպես դիտվում են որպես կենսաբանական ակտիվներ), և հաշվետու տարվա ընթացքում գործարկել է ինկուբատորը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ առկա է 151,200 հատ ձու:

Հաշվետու տարվա վերջին Ընկերությունը արտադրական ծավալների մեծացման, սարքավորումների հզորացման և նորացման նպատակով ժամանակավորապես դադարեցրել է արտադրությունը, ինչով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ հաշվետու տարվա վերջի դրությամբ ճտերի հաշվեկշռային արժեքը զրոյական է: 2023թ. փետրվարից սկսված բոլոր արտադրական գործընթացները վերսկսվել են:

Ստորև ներկայացված է տեղեկատվություն տարվա ընթացքում կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքի շարժի մասին:

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ճտերի հաշվեկշռային արժեք առ 1 հունվար	**112,395**	**99,336**
Տարվա ընթացքում ձեռքբերված ճտեր (1 օրական)	534,179	544,402
Աճեցման ծախսեր	1,701,591	1,893,301
Փոխանցում դեպի պաշարներ մորթելու պահին	(2,348,165)	(2,438,389)
Ճտերի հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբեր	-	98,650
Օգուտ «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսեր»-ով վերաչափումից	-	13,745
Ճտերի հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի	**-**	**112,395**
Ինկուբատորի համար նախատեսված ձվեր՝ ինքնարժեքով, առ 31 դեկտեմբերի	**22,897**	**15,169**
Կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեք առ 31 դեկտեմբերի	**22,897**	**127,564**

Իրական արժեքները որոշվում են տարեվերջի դրությամբ պատրաստի հավերի փաստացի վաճառքի գների հիման վրա՝ դրանից հանելով մորթելու և վաճառքի ակնկալվող ծախսերը, մինչև մորթելու համար պիտանի դառնալը աճեցնելու ծախսերը, ինչպես նաև ակնկալվող շահութաբերության վերադիրը: «Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ի գնահատման համար օգտագործված վաճառքի գինը 1 կգ համար 2022 թ. դեկտեմբերի 31-ին եղել է 1,166.7 դրամ, 2021 թ. դեկտեմբերի 31-ին նույնպես եղել է 1,166.7 դրամ:

Տարեվերջի դրությամբ առկա ճտերի քանակային տվյալներն ըստ օրերի ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Օրական	-	**Քանակ**
25	-	26,268
20	-	29,637
14	-	30,312
8	-	30,656
2	-	30,211
-	-	-
Ընդամենը	**-**	**147,084**

11. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,051,195	226,468
Հանած՝ ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ	(5,797)	-
Այլ ընթացիկ ակտիվներ	7,520	11,670
Դեբիտորական պարտքեր վարձակալությունների գծով	55,782	23,934
Այլ դեբիտորական պարտքեր	31,270	-
Ընդամենը	**1,139,970**	**262,072**

Արժեզրկված դեբիտորական պարտքեր չկան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատելու ամսաթվի դրությամբ տարեվերջյան դեբիտորական պարտքերի մեծամասնությունը մարված է: ԱՊԿ պահուստը չափվել է՝ հիմք ընդունելով Moody's վարկանիշային գործակալության կողմից հրապարակված ցուցանիշները, մասնավորապես, պարտազանցման հավանականությունը՝ 1 տարի ժամանակաշրջանի համար 4.1%, իսկ կորստի աստիճանը պարտազանցման պարագայում՝ 0.54%:

12. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

12.1. Դրամական միջոցների մնացորդներ

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	19,490	10,708
Դրամարկղ	124,497	38,906
Ընդամենը	**143,987**	**49,613**

12.2. Ոչ դրամային գործարքներ

Կատարվել են ներդրումային կամ ֆինանսավորման գործունեությանը վերաբերող հետևյալ ոչ դրամային գործարքները.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Լիզինգով հիմնական միջոցների ձեռքբերում	546,328	44,768

Պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված լիզինգների գծով տոկոսների սուբսիդավորում՝ պետության կողմից ուղղակիորեն լիզինգատուին վճարմամբ	23,101	27,506
Ակրեդիտիվով ձեռքբերված հիմնական միջոցների գծով կրեդիտորական պարտքերի վերաձևակերպում որպես վարկ	-	287,584

13. Կանոնադրական կապիտալ

Ընկերության հայտարարված, թողարկված և լրիվ վճարված կանոնադրական կապիտալն առ 31 դեկտեմբերի 2022թ. կազմում է 83,406 հազար դրամ, որը կազմված է 1 հատ 83,301 հազար դրամ և 1 հատ 105 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերից: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

14. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Բանկային վարկ՝ եվրոյով, 5 տարի ժամկետով, (Euribor + (2.5% - 3.25%))	51,436	226,581
Ակտեդիտիվ՝ եվրոյով	-	287,584
Երկարաժամկետ փոխառություններ կապակցված կողմերից՝ ՀՀ դրամով, տարեկան 7.507% -ով	-	1,136,008
Ընդամենը	**51,436**	**1,650,173**

15. Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Բանկային վարկ՝ եվրոյով, 5 տարի ժամկետով, տարեկան 2.5% -ով	123,446	159,461
Ակրեդիտիվ՝ եվրոյով	89,053	-
Կարճաժամկետ փոխառություն՝ ՀՀ դրամով, անտոկոս	4,075,318	603,979
Կարճաժամկետ փոխառություն ՝ ՀՀ դրամով, տարեկան 7.507%-8.5%-ով	491,486	1,446,389
Կարճաժամկետ փոխառություն՝ Եվրոյով, տարեկան 2%-ով	39,319	50,790
Տոկոսներ կարճաժամկետ փոխառությունների գծով	77,740	103,893
Ընդամենը	**4,896,362**	**2,364,512**

Վերը նշված բոլոր փոխառությունները կապակցված կողմից են:

16. Լիզինգի գծով պարտավորություններ

Ստորև ներկայացված են լիզինգի գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների.

	Լիզինգի գծով պարտավորություններ		Լիզինգի գծով պարտավորությունների ներկա արժեք	
Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Մինչև մեկ տարի	123,909	51,184	97,946	40,407
1-ից 5 տարի	367,894	70,345	314,903	61,728
5 տարուց ավելի	46,257	-	46,257	-
	538,060	**121,529**	**459,106**	**102,135**
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր՝	(78,954)	(19,394)		
	459,106	**102,135**		

Ներառված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
- Լիզինգի գծով պարտավորությունների ընթացիկ մաս	97,946	40,407
- Լիզինգի գծով պարտավորությունների ոչ ընթացիկ մաս	361,160	61,728

	459,106	**102,135**

17. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
Կրեդիտորական պարտքեր հիմնական միջոցների գնումների գծով	1,404	2,211
Կրեդիտորական պարտքեր նյութերի գնումների գծով	13,657	51,909
Այլ հարկերի գծով պարտավորություններ՝ բացի շահութահարկից	51,687	29,173
Ստացված ընթացիկ կանխավճարներ	4,370	648
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	3,504	-
Ընդամենը	**74,622**	**83,941**

18. Հասույթ

Հասույթը իրենից ներկայացնում է արտադրանքի վաճառքից ստացման ենթակա կամ արդեն ստացված գումարները:

19. Այլ եկամուտներ

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված լիզինգի տոկոսի սուբսիդավորում	23,101	27,506
Վարձակալությունից ստացված եկամուտ	51,205	44,168
Տոկոսային եկամուտ	3,538	-
Այլ	6,586	11,388
Ընդամենը	**84,430**	**83,062**

Պետական աջակցության ծրագրի շրջանակում ստացված լիզինգի տոկոսի սուբսիդավորումն իրենից ներկայացնում է ՀՀ Կառավարության 19.07.2018թ. N893-L որոշմամբ հաստատված՝ «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի» շրջանակներում ՀՀ վարչապետի աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից տրամադրվող ֆինանսավորումը:

20. Իրացման ծախսեր

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատավարձ	160,754	116,402
Հիմնական միջոցների մաշվածության ու սպասարկման ծախսեր	43,460	50,918
Վարձակալություն	14,992	14,128
Վառելիք	33,463	24,236
Ապահովագրական ծախս	4,307	3,990
Այլ	8,382	8,318
Ընդամենը	**265,358**	**217,992**

21. Վարչական և այլ ընդհանուր ծախսեր

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատակիցների գծով հատուցումներ	62,617	75,956
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,695	10,429
Պարտադիր վճարներ հարկերի գծով	18,963	7,034
Նյութածախս	2,994	6,572
Պահնորդական ծառայություն	28,000	28,000

Հիմնական միջոցների և ՈՆԱ մաշվածության ու սպասարկման ծախսեր	5,781	3,248
Այլ	9,069	8,766
Ընդամենը	**135,119**	**140,005**

22. Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային ծախս արդյունքային տոկոսադրույքով՝ բանկային վարկերի գծով	18,821	18,301
Տոկոսային ծախս փոխառությունների գծով	77,643	96,787
Տոկոսային ծախս լիզինգի գծով	69,820	14,374
Ընդամենը	**166,284**	**129,462**

23. Գործառնական վարձակալություն

Ընկերությունն ունի վարձակալած տրանսպորտային միջոցներ: 2022թ. ընթացքում որպես ծախս ճանաչված վարձավճարները կազմել են 14,992 հազ. դրամ (2021թ.՝ 14,128 հազ. դրամ) (տես ծանոթագր. 20): Պայմանական վարձավճարներ և ենթավարձակալություններ չկան:

Ընկերությունը ունի նաև գործառնական վարձակալությամբ տրամադրված տարածքներ և տրանսպորտային միջոցներ՝ գերակշիռ մեծամասնությամբ կապակցված կողմերին (տես ծան. 25.3): Դրանց գծով եկամուտը ներկայացված է այլ եկամուտների կազմում (տես ծան. 19):

24. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ընթացիկ ժամանակաշրջանի ընթացիկ շահութահարկ	37,472	41,873
Նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ շահութահարկի ճշտում	1,502	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ (տես ծան. 7)	(3,848)	(61)
	35,126	**41,812**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2021թ.՝ 18%): Շահութահարկի կիրառվող դրույքի և փաստացի (արդյունքային) դրույքի համաձայնեցում.

	2022թ.		**2021թ.**	
Հազար դրամ		**%**		**%**
Շահույթ նախքան հարկումը	**179,293**		**232,790**	
Շահութահարկ՝ ընթացիկ դրույքաչափով	32,273	18	41,902	18
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը	(48,669)	(27)	(25,449)	(11)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը՝ վաճառքի ինքնարժեքին վերաբերող	21,352	12	-	-
Այլ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	30,170	17	25,359	11
	35,126	**20**	**41,812**	**18**

25. Կապակցված կողմերի հետ գործարքներ

25.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Մասնակիցները թվով 2 ֆիզիկական անձիք են (Ծանոթ. 1):

25.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	**2022թ.**	**2021թ.**
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	16,145	15,598
	16,145	**15,598**

25.3. Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	**Գործարքի գումար 2022թ.**	**Գործարքի գումար 2021թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2022թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2021թ.**
Ընկերության մասնակիցների հետ՝				
Ստացված փոխառություններ	3,471,338	385,450	4,075,318	-
Փոխառության մարում	-	3,405,502	-	603,979
Այլ կապակցված կողմերի հետ՝				
Ստացված փոխառություններ	182,478	2,798,130	530,807	-
Փոխառության մարում	2,284,858	233,540	-	2,633,186
Փոխառության տոկոս	77,740	96,787	77,740	103,893
Տրամադրված փոխառություններ	93,800	-	-	-
Տրամադրված փոխառության մարում	93,800	800	-	-
Տրամադրված փոխառության տոկոս	3,538	-	3,538	-
Ապրանքի վաճառք – դեբիտորական պարտք (ԱԱՀ ներառյալ)	88,002	139,399	1,469	939
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում - կրեդիտորական պարտքեր (ԱԱՀ ներառյալ)	13,538	26,304	1,114	1,086
Ստացված կանխավճարներ	-	16,188	-	16,188
Տրամադրված գործառնական վարձակալություն – դեբիտորական պարտք (ԱԱՀ ներառյալ)	61,245	53,002	55,582	23,934

26. Պայմանական և հետհաշվեկշռային դեպքեր

26.1. Դատական գործեր

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական գործեր չեն եղել:

26.2. Երաշխավորություններ

2023թ. սեպտեմբերին Ընկերությունը որպես վարկառու ՀՀ բանկերից մեկի հետ կնքել է վեց միլիարդ ՀՀ դրամով (և/կամ դրան համարժեք այլ արժույթով) մայր գումարների ֆինանսավորման սահմանաչափով, 360 ամիս գործողության ժամկետով վարկային պայմանագիր, որի համար որպես ապահովություն են հանդիսացել Ընկերությանը և վերջինիս կապակցված այլ ընկերություններին պատկանող որոշ շենքեր, դրամական միջոցներ, ինչպես նաև հիմնադիրների անձնական երաշխավորությունները:

26.3. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26.4. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

Տնօրեն
Վահագն Գևորգյան

Գլխավոր հաշվապահ
Վահան Հախվերդյան

28 սեպտեմբերի 2023թ.